



“ՌՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ՊԱՆ.” ՂՈՒԿ ԺԸ 16.

ՀԱՏՈՐ ԼԴ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒԼԻՍ 1, 1903

ԹԻՒ 7

ՍՈՒՐԲ ԻՍԱՀԱԿՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ
Սբ. փեթրոսպուրկի ամենէն գեղեցիկ եկեղեցին է Սբ. Իսահակայ մայր եկեղեցին, որ շատ հեռու չէ Չարին Չմեռնային Պալատէն: Չարը երբ Սբ. փեթրոսպուրկ կը բնակի, ատեն ատեն այս եկեղեցին կ'երթայ իր պալատականներով, թէ և աւելի յաճախ պալատին կից եղող մասնաւոր մատուռ կ'երթայ: Ռուս եկեղեցւոյն անդամները շերմեռանդ են, և ժողովուրդին մեծ մասը, ունէ պարագաներու ներքեւ երբեք բացակայ չգտնուիր եկեղեցւոյ մէջ կատարուելու արարողութիւններէն: Եւ այս բանին մէջ Չարը օրինակ կը հանդիսանայ իր հպատակներուն. վասն զի ամէն օր ներկայ կը գրանուի եկեղեցւոյ պաշտամունքին: Եւ երբ դուրս կ'երթայ, եթէ իր այցելած տեղը Յունադաւան եկեղեցի կայ, հոն պաշտամունքի կ'երթայ այդ տեղը հասնելէն ետքը առաւօտուն: Սբ. Իսահակայ մայր եկեղեցին նախօրը երեք եկեղեցիներու գետինը կը գրաւէ, որոնց մէկը շինած էր Մեծն Պետրոս և միւսը կատարինէ Բ. կայսրուհին: Հիմակուան շէնքին գրեթէ 4,000,000 Անգլ. ոսկի դացած է, վասն զի անոր շինութեան և զարդարանքի համար գործածուած ամէն մէկ բանը ամենէն սուղ տեսակէն են: Պատերը և յատակները այլևայլ տեսակ մարմարներով պատուած են, և պատուհանի փառաւոր ապակի մը կայ, որուն վրայ շքեղապէս նկարուած է Քրիստոսի Համբարձման պատկերը:

հացը կը վաստկէր ասոր անոր ծառայելով: Օր մը երբ տուն կ'երթար, ճամբան պանդոկի մը դրան մօտ նշտաւ հանգչելու և իր կտոր մը ցամաք հացը ուտելու: Մինչ հոն կը նստէր, գեղեցիկ կառք մը եկաւ, և պանդոկապետը դուրս ելաւ ծառայելու ելու պարուններու որոնք կառքին մէջ

պետն էր, լսեց ասիկա և խօսեցաւ իր աշակերտին, որ Պերճի նշան ըրաւ որ իրեն քով գայ: “Դուն, տղեկ,” ըսաւ, “կ'ուզե՞ս քու վիճակդ փոխել իմինիս հետ:” “Այր ներէք, տէր իմ, ես գէշ մտքով չըսի:” “Ես չեմ բարկանար,” ըսաւ դեռահաս պարոնը, “ես միայն կ'ուզեմ գիտնալ թէ դուն



ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ ՀԱՐԱՏՈՒԹԵՆԷՆ ԱՂԵԿ Է
Փոքրիկ Պերճ աղքատ տղայ մըն էր, և ոչ հայր ունէր ոչ մայր: Իր

էին: Ասոնց մէկը շատ դեռահաս էր, կը փափաքէր քու վիճակդ իմինիս Պերճէ շատ մեծ չէր, և Պերճ ինք իրեն ըսաւ թէ “Ի՞նչ աղէկ կըլլար եթէ ես անոր տեղն ըլլայի:” Երբ նայեցաւ իր հացի կտորին և իր մաշած հանգերձներուն վրայ, և յետոյ անոնց արուոր բաներուն վրայ, չկրցաւ չըսել բարձր ձայնով, Ո՛հ, երանի՜ թէ այդ պարոնին փառաւոր կառքը իմ ըլլար. երանի՜ թէ կարող ըլլայի իմ վիճակս փոխել անոր հետ:”
Միւս պարոնը որ պատանիին վարժա-

հետ փոխել:” “Ո՛հ, հիմա կատակ կ'ընէք,” ըսաւ Պերճ: “Ո՛չ ոք կ'ուզէ իր վիճակը իմ վիճակիս հետ փոխել և ամէն օր սաչափ մղոն քալել, և ցամաք հացէն զատ ուրիշ բան չունենալ ուտելու:” “Ղաւ,” ըսաւ պատանին, “ես պիտի տամ քեզի բոլոր ունեցածս, եթէ դուն ինձի տաս բոլոր ունեցածդ, և ինչ որ ես չունիմ:” Պերճ վարանեցաւ, բայց վարժապետը ըսաւ որ ազատօրէն խօսի: “Այո,” ըսաւ Պերճ այն ատեն, “ես,

իմ վիճակս կը փոխեմ ձերինն հետ։” Բայց երբ դեռ ահա սակ պարուն դուրս ելաւ, Պերճ տեսաւ որ անիկա շատ կաղ էր։ Սրունքները ծուռ էին, ուստի նեցուկներով քաշելու պէտք ունէր։ Երեսը գեղնած և նիհար էր։ Պերճ այն ատեն սկսաւ մտածել թէ առողջութիւնը գեղեցիկ կառքէն աղէկ է։ «Շիմա կ’ուզե՛ս վիճակդ իմ վիճակիս հետ փոխել», ըսաւ պատանին. «ես ամէն ինչ որ ունիմ պիտի տամ քեզի, քեզի նման զորաւոր ըլլալու համար։” Բայց Պերճ ըսաւ, «Ո՛հ, եթէ բոլոր աշխարհը տաք չըլլար։” «Ես ուրախութեամբ աղքատ կ’ըլլայի, եթէ քեզի պէս կարող ըլլայի քալել։ Բայց եթէ Աստուած կ’ուզէ որ ես կաղ մնամ, կը ջանամ երջանիկ ըլլալ և շնորհակալ, ինչպէս որ եմ արդէն», ըսաւ պատանին։

ՄԵՆԱՀՈՒԹ ԵՆՁԻ ՄԸ ՎԱՐՈՒԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Հէնրի Ուորտ Պիչըր այն մեծահոգի անձերէն մէկն էր որոնց գործին շատութիւնը արգելք չըլլար պղտիկ մարդասիրութիւններ ընելու։ Եթէ տեսնէր լացող մանուկ մը, կ’առնէր զանիկա անոր մօր գիրկէն և կը հանդարտեցնէր։ Մնգամ մը, երբ Մր. Պիչըր Ուաշինկթըն ըրած ճամբորդութենէն տուն կը գառնար, երկաթուղւոյ կառքին մէջ երկու պըզտիկներ կը գտնուէին, մէկը մանչ միւսը աղջիկ, երկուքն ալ տասը տարեկանէն վար։ Ասոնք իրարու ձեռքէ բռնած էին և կը թուէր թէ մինակ էին։ Մր. Պիչըր նախաճաշ ըրաւ Ուաշինկթընի մօտ, բայց տեսաւ որ պղտիկները կառքէն դուրս չելան։ Յայտնի կ’երեւնար թէ անոնք բոլոր գիշերը ճամբորդած էին առանց ուտելիք ունենալու։ Երբ Մր. Պիչըր կառախումբ վերադարձաւ նախաճաշելէն ետքը, բազուկները լեցուն էին պղտիկներուն համար լաւ ուտելիքներով։ Խօսակցեցաւ անոնց հետ, և հասկցաւ թէ հարաւային նահանգէ մը կու գան և կը յուսան թէ զիրենք պիտի դիմաւորէ իրենց մէկ հօրեղբայրը զոր երբեք չէն տեսած։ Սոյնպէս պատահեցաւ որ կառախումբը քանի մը ժամ ուշ մնաց, և երբ փոքրիկ ճամբորդները ձըրդի Սիթի հասան, ուր կ’ակնկալէին թէ իրենց հօրեղբորմէն պիտի դիմաւորուէին, մէկը չգտնուեցաւ որ փնտռէր զիրենք։ Մր. Պիչըր սպասեց անոնց հետ, զանոնք զուարթ պահեց զուարճա-

խօսութիւններով։ Եւ ահա երևան եկաւ անապարանօք վաղող մարդ մը, յայտնապէս միտքը խորհուրդներով լեցուն։ Մր. Պիչըր գոչեց անոր և հարցուց թէ ի՞նչ կը փնտռէ։ «Երկու մանուկներ», պատասխանեց մարդը։ «Կարծեմ հոս են. ասոնք երկու մանուկներու կը նմանին, այնպէս չէ”, ըսաւ Մր. Պիչըր։ Պղտիկներուն հօրեղբայրը շատ շնորհակալ եղաւ և հարցուփորձ ընելէ ետք երբ հասկցաւ թէ անփորձ ճամբորդներուն հոգատարութիւնն ստանձնողը փիլիմըթի եկեղեցւոյն մեծահասակ հովիւն է, աւելի զգաց իր երախտագէտ ըլլալու պարտականութեան ծանրութիւնը։ Ուստի թէ՛ մարդը և թէ՛ մանուկ-

տին վրայ է. և տարեկան մեծ տօնախմբութիւններէն մէկն է շուրի տօնը որ միշտ կը սկսի հինգշաբթի իրիկուն և կը տևէ երեք գիշեր և երեք ցերեկ։ Ժամանակին մէկ մասի միջոցին Ժողովուրդը կը հաւաքուի քաղաքին բազմաթիւ տաճարներուն մէջ. բայց տօնախմբութեան պսակն եզող մասն է չքեղապէս զարդարուած նաւակներու թիափարութիւնը նուիրական գետին վրայ, վեր վար։ Նաւակներէն ոմանք սիրամարգի ձև ունին, և ուրիշներ՝ ուրիշ երևակայական ձևեր, և իրիկունները ջահերուն ու լապտերներուն լոյսը տեսարանին պայծառութիւնը կ’աւելցնեն։



ները յաճախ Մր. Պիչըրի հոգեւոր Ժողովներուն կ’երթային այնուհետև, և մեծ քարոզչին ունկնդրող ուրիշ շատերու նման անոր կապուեցան անձնական բարեկամութեան և երախտագիտութեան կապերով։

ՄԱՀԱՐԱՃԱՅԻ ՆԱՒԱԿԸ

Մահարաճաւ ամէնէն բարձր տիտղոսն է որ կը տրուի Հնդկաստանի մէջ ունէ Հնդիկ իշխանի, և կրնայ թարգմանուիլ «Հզօր իշխան»։ Մահարաճաներու գաւառները ամէնն ալ Բրիտանական պետութեան մէկ մասը կը կազմեն։ Բանը այսպէս է նաև Պէնարէսի Մահարաճային համար, որուն նաւակը կը ցուցուի հոս։ Պէնարէս նոյն իսկ կեդրոնն է Հնդկական կրօնքին և բնակատեղին բազմաթիւ Պըրսիական քահանաներու։ Գանդէս գե-


ՍՊԱՍԷ ՄԻՆՉԵԻ ՏԻՂՄԸ ՉՈՐՆԱՅ Խաչիկ աղբար, ինչպէս կը կոչէր զանիկա գեղին մէջ ամէն մարդ, հին գլուխ մարդ մըն էր։ Ամէնուն սիրելի էր, և գեղին մէջ մեծ աղքեցութիւն ունէր։ Բարի էր անիկա և ժրջան։ Գեղին երիտասարդներէն մէկը սաստիկ նախատուած էր ուրիշէ մը և խաչիկ աղբարին եկաւ, բարկացած ու կրակ կտրած, և ըսաւ թէ անմիջապէս պիտի երթայ և ներում խնդրելու պիտի ստիպէ նախատողը։ «Սիրելի աղաս», ըսաւ խաչիկ աղբար, մտիկ ըրէ խաղաղութիւն սիրող ծերունիի մը խրատը։ Նախատիւնը տիղմի կը նմանի. շատ աւելի աղէկ կը մաքրուի երբ չորնայ։ Սպասէ քիչ մը մինչև որ երկուքդ ալ պաղիք, և խնդիրը դիւրաւ կը շտկուի։ Եթէ հիմա երթաս, կուի միայն պիտի ընէք։”

Հաճութեամբ կրնանք աւելցնել թէ երիտասարդը մտիկ ըրաւ անոր խրատին, և հետեւեալ օրը դեռ իրիկուն չեղած՝ նախատող անձը եկաւ ներում խնդրել:



ԵՐԿԱԹՈՒՂԻԻ ՏԱՐՕՐԻՆԱԿ ԿԱՆՈՆ ԶՈՒԻՑԵՐԻՈՑ ՄԵՋ

«Երբ Զուիցերիա հասանք» կ'ըսէ զբոսաշրջիկ տիկին մը: «Երկաթուղիի կայարաններուն մէջ, տոմսակալաճառներուն մօտը, մանուկներու բարձրութիւնը չափելու գործիքներ տեսանք: Ես ժընէվի պաշտօնեային ըսի, «Փոքրիկ աղջկանս համար կէս տոմսակ» «Բայց անիկա չափէն բարձր չէ» ըսաւ մարդը: «Հաճեցէք, աղջիկը թող կայնի չափին վրայ» Աղջկանս բարձրութեան չափը աղէկ մը առնուեցաւ: Զորս ոտք և հինգ մատ էր: «Ղաւ, ասիկա չափէն երկայն չեկաւ» ըսաւ պաշտօնեան: Այն ատեն մարդը ըսաւ թէ մանուկներու տարիքի մասին անթիւ վիճաբանութիւններու պատճառաւ Զուիցերիոյ մէջ հիմա կէս գին կ'առնուի մանուկներու հասակի բարձրութեան համեմատ և ոչ թէ տարիքի: Երեք ոտքէ վար բարձրութիւն ունեցող մանուկներ ձրի կը ճամբորդեն: Երեք ոտքէ մինչև չորս ոտք վեց մատ բարձրութիւն ունեցողներ կէս գին կը վճարեն: Զորս ոտք վեց մատէ վեր եղողները ըման կը վճարեն: Այս նոր կանոնը աղէկ կանոն է» ըսաւ պաշտօնեան: «Վէ՛ճերը հիմա դադրած են: Մանուկները կը չափուին տոմսակալաճառներուն մօտը, և այսպէս կ'որոշուի բանը»:



ԻՇԽԱՆ ՅՈՆ ՊԻԻՆՈՎ
Այսօրուան ամէնէն երևելի դիւանագէտներէն մէկն է Կոմս Պերնարտ Յոն Պիւլով գերման նախարարապետը: Իր դիւանագիտական կեանքն սկսաւ 1874ին, և կայսրը զանիկա 1897ին կանչեց Հռոմէ, ուր Գերմանական դեսպան էր, առժամապէս վարել Արտաքին գործերու նախարարի պաշտօնը, քանի մը ամիսէն պաշտօնը, որուն մէջ ան նշանաւոր կարողութիւն ցուցուց, մնայուն կերպով իրեն յանձնուեցաւ: Երեք տարի աւելի ետքը, երբ Իշխան Հոէնլոէ հրաժարեցաւ, Կոմս Պիւլով Գերման նախարարապետ կարգուեցաւ: Անիկա չորրորդ նախարարապետն է Վիլհելմ Ա-ի իշխանութեան օրով կայսրութեան հիմնուելէն ի վեր: Անոր նա-

խորդներն եղած են Իշխան Պիլցմարք, Կոմս Քափրիվի, և Իշխան Հոէնլոէ: Կոմս Յոն Պիւլով կու գայ վաղեմի և ազնիւ ընտանիքէ մը, որուն պատմութիւնը կը հասնի մինչև 800 տարի առաջ: Շահած է իր վեհապետին նաև դաշնակից վեհապետներուն և բոլոր մտացի Գերմանացիներուն վստահութիւնը: Քաջ վիճաբանող մըն է և կարող պաշտպանելու իր քաղաքականութիւնը Բայխսթակին մէջ:

Մտերս Իշխան տիտղոսը ընդունած է կայսրէն:



ԶԻՓՍ

«Օ՛ն, տղայ» «Օ՛ն, մարդ» պատասխանը եկաւ փայլակի արագութեամբ:



Bernhard von Bülow

Թեամբ, «Վայրկեան մը կը կենամ» Տղան կեցաւ և չորս գին դարձաւ երեսը ծամածռելով: Մը. Արթըր Միլմէն արուեստագէտը գեղին սահմաններէն դուրսը կը պտտէր, գեղեցիկ տեսարաններ կը փնտռէր իր գծագրութեան տետրակը լեցնելու համար: Տեսնելով ցնցոտիներ հագնող տղայ մը, որ ձեռքի պարապ կողովը կ'օրէր, իր տետրակին մէջ ընդօրինակելու յարմար բան մը նկատեց զանիկա: Տղուն երեսը դաժան կ'երևնար, բայց նորէն բարեբարոյութիւն մը կը ցուցնէր:

«Տղաս, Բնչ է անունդ» «Զիփս» ըսաւ տղան աչքը թարթելով: «Վայ» շնչեց Մը. Միլմէն, «փայլուն պատա-

նի» Ետոյ բարձրաձայն, «Զիփս (տաշեղներ) անունով մկրտուած ես» «Ոչ, ճիշդ, բայց հասարակութիւնը զիս այդպէս կը կոչէ, իմ գործիս համար» եւ Զիփս օրեց իր կողովը հպարտութեամբ մը:

«Օ, աղէկ, Զիփս, եթէ կ'ուզես քառորդ մը շահիլ դիւրաւ, քիչ մը կայնէ հանդարտ ճիշդ ինչպէս որ ես հիմա, և պատկերդ շինեմ»:

Զիփս զուարթ գէմք մը առաւ, եւ արուեստագէտը գծագրեց զանիկա:

Զիփս իրօք նշանաւոր նկարագիր մը ունէր: Մեծամեծաճառ մըն էր: Մեծ ատաղձարան ունեցողները կը թողէին որ անիկա առնէր բոլոր տաշեղները: Եթարութեամբ և ձրի կու տային տաշեղները, վասն զի գիտէին թէ տղան միակ նեցուկն էր իր մօր որ, շատ տկար ըլլալուն համար, գրեթէ գործ չէր կրնար ընել: Բայց Զիփս մուրացկան չէր իր նպատակն էր գործ կատարել օրինաւոր մեթոտով: Ուստի քիչ մը բան կը վճարէր այդ տաշեղներուն համար, և կողովներով կը ծախէր զանոնք և գեղին շատ տուներուն տաշեղի պէտքը կը լեցնէր:

Ամէն մարդու սիրելի էր Զիփս, որ շատ աշխատասէր էր, շատ կը սիրէր իր մայրը և շատ զուարճախօս և կատակաբան էր: Զուարթ խօսք մը կը զանէր ամէն տանտիկնոջ և սպասուհիի համար: Գլխարկը կը հանէր և «Շնորհակալ եմ» կ'ըսէր բիրտ քաղաքավարութեամբ մը ամէն անգամ որ վճարուէին իր տաշեղներուն ստակները: Զարմանալի կրնայ երևնալ որ ուրիշ տղաք չէին գողնար Զիփսի հաւաքած տաշեղներէն: Իրաւ մէկ երկու անգամ պատահեցան ատանկ բաներ, բայց Զիփս կարող էր ինչպէս գործել նոյնպէս ալ կուրիլ, և իր իրաւունքը յափշտակել փորձողներուն վրայ յարձակած է այնպիսի կերպով որ փափաքելի չէ:

Այնուհետեւ ատաղձարանին վերաւ տեսուչը ուղերով տղուն մեծ բարեք մը ընել, ինքն ալ բաւական զուարթամիտ ըլլալով, հետագայ աղբը փակցուց: «Այս բակին տէրերը Բիչըրտ Հոլմի, որ Զիփս անունով ծանօթ է, ծախած են տաշեղները ժողովելու իրաւունքը: Ով որ այս որոշման հակառակ գործէ, ոստիկանութեան պիտի յանձնուի» Այսպէս Զիփս իրօք եղաւ մենաշնորհեալ մեծամեծաճառ մը, թէև ինք չէր գիտեր, մինչև որ

Մր. Միլմէն արուեստագէտը իմացուց Չիփսի անոր իր զբաղումը պատմելէն ետքը :

Մր. Միլմէն շատ հաւնեցաւ այս տղուն : Օր մը ըսաւ, «Չիփս, ես չուտով քաղաք պիտի երթամ, և բոլոր ձմեռը պատկերներ պիտի նկարեմ. կան քանի մը բաներ զորոնք քեզի պէս տղու մը կ'ուզեմ յանձնել, կ'ուզեմ ինձի հետ երթալ : Կրնաս իմ սենեակներուս հոգ տանիլ, և երթալ ուր որ պէտք ունենամ քեզ զրկելու : Ես քեզի կ'ուզեմ տալ . . . նա, յինք» : Մր. Միլմէն մտածեց վայրկեան մը, և յետոյ տուաւ գումարի մը անունը, որ Չիփսի աչքերը խաղցուցին պարզապէս : «Մտածէ ասոր վրայ և հարցուր մօրդ» : Չիփսի երեսը տխրեցաւ մայր բառը լսելուն վրայ, Չիփս մէկ կողմ գնաց շատ խոժոռած : Այդ գիշեր քունը չտարաւ, Մր. Միլմէնի ըսածը իրեն համար անլուր բան էր : Որոշում մը ըրաւ «Ես մօրս բան մը պիտի չըսեմ և զանիկա անհանգիստ պիտի չընեմ ասոր համար մինչև ես իմ վերջին որոշումս չտամ» : Առաջին անգամը չէր ասիկա որ Չիփս կը զգուշանար իր մօր անձկութիւն տալէ : Առաւօտեան դէմ քնացաւ : Երբ արթնացաւ և իր գլուխը լուաց պաղ չրով, ամէն բան յստակեցաւ : Գիտէր : Որոշեց ուղղակի երթալ Մր. Միլմէնի : «Ինչպէս եղաւ» : հարցուց արուեստագէտը : «Ես բաւական մտածեցի ասոր վրայ, տէր : Ես բոլորովին յօժար և պատրաստ եմ, բայց մայրս առանց ինձի չկրնար ըլլալ : Այո, տէր իմ, գիտեմ թէ ինձի առաջարկուածը շատ ստակ է, բայց այս արգելքը ունիմ : Դուք զիս երեք ամսուան համար կ'ուզէք : Անկէ ետքը ետ պիտի դառնամ և պիտի տեսնեմ որ իմ տեղս ուրիշ տղայ մը գրաւած է : Եւ կարելի է որ քաղաքացի ըլլալէս ետքը պիտի ուզեմ վառելիք ծախել : Եւ աստղձարանի մարդիկը խոստացած են ինձի պաշտօն մը տալ բաւական մեծ ցածիս պէս, ու թայց ապահով բան : Հապա մայրս : Միշտ պիտի ցաւի : Հոգ չէր եթէ զօրաւոր ըլլար : Շնորհակալ եմ, տէր իմ, բայց ես որոշումս տուած եմ» :

Գրեթէ լեցուեցան այս պարկեշտ աչքերը արցունքով : Մր. Միլմէն բռնեց տղուն ձեռքը. երբեք այնքան ուղած չէր նկարել բան մը որքան զանիկա այդ վայրկեանին : «Ապրիս, տղաս, երբ դալ տարի վերադառնամ, պի-

տի ընեմ ինչ որ չեմ կրնար այս ձմեռ» : ըսաւ :

Երբ տղան գնաց, արուեստագէտը ըսաւ ինքնիրեն, «Չիփս ունի աղուոր զլուխ մը և բարի սիրտ մը» :

ԿՈՅՐ ՆՈՒԱԳԱՅՈՒՆ

Ծերունի Հայնրիխ ջութակ կը զարնէր կրէօյցման քաղաքին մէջ և դըժուարաւ կը ճարէր իր ապրուստը իր նուագածուկները լսելու համար բուրտիքը դիզուող տղոց տասնոցներով : Ծերունի Հայնրիխ կոյր էր : Գերմանական ծննդավայրին մէջ, հեռուն, անոր միակ դուստրը կը մեռնէր և իր ետեւը կը թողուր փոքրիկ մանչ մը : Տան մէջ չկար մէկը որու յանձնէր իր զաւակը. ուստի գրեց իր ծերունի կոյր հօր, որ ջութակ կը զարնէր նիւ Երբքի փողոցներուն մէջ : «Տղան ինձի զրկէ, ես պիտի նայեմ զանիկա» : գրեց ծերուկը : Այսպէս փոքրիկ Հայնրիխ անցաւ լայն Ովկիանոսէն և իր ծերունի մեծ հօր հետ բնակեցաւ : Ամէն օր անոնք կը պտրտէին փողոցներուն մէջ : Փոքրիկ տղան ստակը կը հաւաքէր մինչ ծերունին իր ջութակը կը զարնէր : Շատ քիչ տասնոցներ կը ստանային անոնք, բայց ինչ որ կը շահէին, ծերունի Հայնրիխ իր փոքրիկ թոռան կեանքը, որչափ կարելի էր, երջանիկ ընելու կը գործածէր այն նոր երկրին մէջ ուր եկած էր ան : Նեղ փողոցներուն մէջ գտնուած տղաք շատ մարդասիրութիւն կը ցուցնէին փոքրիկ Հայնրիխի : Եթէ տասնոց չունենային, անոր ինձնոր մը կամ նարինջ մը և կամ քաքար մը կու տային, և ծերունին քիչ անգամ պարապ ձեռքով կը դառնար ձեղնայարկի սենեակը ուր ինք և փոքրիկ տղան կը բնակէին : Երբ փոքրիկ Հայնրիխ մեծցաւ, սորված էր իր մեծ հօր ջութակը զարնել և չուտով ջութակահարի պաշտօն մը ստացաւ լաւ թոշակով քաղաքի թատրոնի մը մէկ նուագախումբին մէջ : Անիկա մտցաւ իր ծերուկ մեծ հայրը որ զինք բերել տուած էր լայն Ովկիանոսէն ասդին շատ ատեն առաջ երբ մեռաւ իր մայրը և զինք թողուց առանց բարեկամի որը մը : Ոհ, ոչ, էթէ ծերունին հիմա կը զարնէր իր ջութակը, կը զարնէր ոչ թէ քաղաքի փողոցներուն մէջ, այլ՝ երիտասարդ Հայնրիխի հանգստաւէտ բնակարանին սիրուն մէկ անկիւնը :

ՄԱՅԻՍԻ ՀԱՆՆԵԼՈՒԿԻՆ ՊԱՏԱՍԻԱՆԸ

Table with 4 columns and 10 rows of Armenian characters.

Լուծեցին, Արտիս. — Վարդան Վարդերեսեան, Սահակ. — Նեփթաղիմ Գ. Թորոսեան : Թարգմ. — Բ. Աբրահամեան : Տեղագրութիւն. — Կարապետ Ս. Աղաճանեան, Խաչատուր Գ. Անտոնեան : Սելուշ. — Աբրահիմ Սուքիասեան : Ուրֆու. Աբրահիմ Ն. Գաղղղեան :

Մարտի հանելուկին պատասխանը զրկած են հետագայ անձինք ևս, թէև տարածամ :

Թուս. — Բեւառդ Ս. Աճերեան, Անդրանիկ Ա. Նեկոյանեան, Սեդրաք Գովեգեան : Տեղագրութիւն. — Կարապետ Ս. Աղաճանեան :

ՀԱՆՆԵԼՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՐԲԵՆ

Table with 5 columns and 10 rows of Armenian characters.

- 1. Բաղձալի տեղ մը : 2. Արհեստաւոր մը : 3. Մովսէսը մէկ թագաւորը : 4. Քաղաք մը Գուգա յի դաշտերուն մէջ : 5. Գաւթի աներներէն մէկը : 6. Աստուծոյ դործին հակառակող Արարացի մը : 7. Հրէական ամիս մը : 8. Անձնաբաց կին մը : 9. Եղիպտոսի մի քաղաքը : 10. Նշանաւոր քաղաք մը :

Սուրբ Գիբրէի առնուած այս տան անունները զտնելու համար վերոյիշեալ ցուցակը ճշդ օրինակէ խաւաքարտի մը վրայ, և մկրատով մը վարեն վեր հինգ կտորներու բաժնէ ցուցուածին պէս, յետոյ սեղանի մը վրայ այդ կտորները վեր ու վար շարժելով ջանա կարգաւ նշանակեալ անունները, կտրուած մասերուն վրայի գերերէն իւրաքանչիւր միայն մէկ անգամ գործածելով : Կ. պոլիս 804 ՍԷՓ ՀԱՅԱՍՏԱՆ

Տարեկան բաժանորդագին 6 դահ. արծաթ կանիկ, ամէն տեղոյ համար :

Ամերիկայի Մեթիստալոց Ընկերութեան կողմէն Արտօնատէր Ճ. Գ. Կիրն Տնօրէն—Միսաղիբ Հ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՂԻՍ Ի ԵՊԱՆՈՒ Ա. ՅԱՅՈՒ ԳՅՈՒՅԱՆ Ֆինանսները Եօզուու. Ամերիկան խան